Լևոն Սուրենի Իգիթյան

Ծնվել է 1939թ. Վրաստանի Լյուքսեմբուրգ քաղաքում։

1946թ.-ից ապրում է Երևանում։

1956 թ. ավարտել է Երևանի N 12 միջնակարգ դպրոցը։

1959 թ. ընդունվել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժին։ Ուսանելու հետ միաժամանակ աշխատել է «Հայպետնախագիծ» ինստիտուտում։

1957-58 թթ. աշխատել է «Երևանկաբել» գործարանում։

1958-59 թթ.՝ «Արմժիլգրաժդանպրոյեկտ» ինստիտուտ։

1966 թթ. ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժինը։

1969-77թթ.՝ «Երևաննախագիծ» ինստիտուտի ճարտարապետ, խմբի ղեկավար, սեկտորի պետ։

1977-85 թթ.՝ Հայաստանի ճարտարապետների միության պատասխանատու քարտուղար, համատեղությամբ՝ «Երևաննախագիծ» ինստիտուտ՝ որպես խմբի ղեկավար։

1986-2000թթ.՝Հայաստանի Պետշինի (ներկայումս ՀՀ քաղաքաշինության նախարարություն) բաժնի վարիչ, վարչության պետ։

2000-2004թթ.՝ Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության խորհրդի քարտուղար (հասարակական կարգով)։

Ներկայումս աշխատում եմ «Նարեկ Սարգսյան» ճարտարապետական արվեստանոցում։ Նախագծել եմ հասարակական, բնակելի հուշարձանային օբյեկտներ։ Վերջին աշխատանքներից՝ Առնո Բաբաջանյանի արձանը ճարտարապետական լուծման հեղինակ (քանդակագործ Դավիթ Բեջանյանի հետ), Վ. Սարոյանի հուշարձանը Երևանում (քանդակագործ՝Դավիթ Երևանցու և ճարտարապետ Ռ. Հասրաթյանի հետ)։

Իրականացրել է շուրջ 40 հուշարձանային նախագծեր և 100 գրքի ձևավորում։

1974-86 թթ.՝Հանրապետության ստեղծագործող երիտասարդների խորհրդի նախագահ։

1974-2007 թթ.՝ Հայաստանի Ճարտարապետների միության վարչության անդամ։

1979-1991 թթ. ՝ ԽՍՀՄ Ճարտարապետների միության վերստուգիչ հանձնաժողովի անդամ։

2006-2008 թթ.՝ Ճարտարապետության բնագավառում ՀՀ Պետական մրցանակների հանձնաժողովի նախագահ։

2009թ. Հայաստանի հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտվել է Երևանի ավագանու անդամ։

2009թ.-ից՝ «Գեղագիտության ազգային կենտրոն» ՊՓԲԸ գլխավոր տնօրեն և Ժամանակակից արվեստի թանգարանի կառավարման խորհրդի նախագահ

2012թ. արժանացել է Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ կոչման։

2013 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ։